**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՐԱՄԵՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ**

**N 26 <<22>> <<02>> 2017թ.**

☎ (0-255) 6-00-58

Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյան

Հարգելի պարոն մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում Սարամեջ համայնքի ղեկավարի թիվ 08 որոշումը :

Առդիր 1 թերթ:

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (22.02.2017թ.) Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 փետրվարի 2017 թվականի N 08-Ա

## ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԻՆՈԴԱՀԼԻՃԻ ՇԵՆՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի բնակիչ Սուրիկ Ավդալյանի դիմումը որով խնդրել է իրեն հատկացնել համայնքի սեփականություն հանդիսացող կինոդահլիճը և նրա զբաղեցրած 0.01635հա հողամասը, որի դիմաց պարտավորվել է կատարել համապատասխան շինարարական աշխատանքներ կինոդահլիճը կարճ ժամկետում վերակառուցելու որպես արարողությունների սրահ և այն կծառայի համայնքի բնակչությանը : Հաշվի առնելով նաև, որ նշված կառույցը 1989թ.-ից կառուցված օրվանից մինչև այսօր չի ծառայել, որպես կինոդահլիճ, քանի որ չի եղել և այժմ չկա համապատասխան տեխնիկական միջոցներ և համապատասխան գույք, անհրաժեշտ է կատարել ներքին հարդարման, երթիկի և պատերի վերանորոգման աշխատանքներ, իսկ համայնքը չունի նման ֆինանսական միջոցների հնարավորություն նշված թերությունները վերացնելու և կառույցը,որպես կինոդահլիճ օգտագործելու համար, քանի որ բնական աղետների հետևանքով կառույցը ընդանրապես դառնում է օգտագործման համար ոչ պիտանի :

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով << Տեղական Ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ և 65-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60 և 66 հոդվածներով , Հիմք ընդունելով նաև համայնքի ավագանու որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 25082014-06-0038 վկայականը, հարգելով համայնքի բնակիչների խնդրանքը համայնքում արարողությունների սրահ ունենալու վերաբերյալ :

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.ՀՀ Լոռու մարզ Սարամեջ համայնքի 5 փողոց թիվ 6 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 158.42քմ մակերեսով կինոդահլիճի շենքը նվիրատվության կարգով որպես սեփականություն հատկացնել Սուրիկ Ավդալյանին կնքելով նվիրատվության պայմանագիր, իսկ շինության կառուցման և սպասարկման համար զբաղեցրած 0.01635հա հողամասը ուղղակի վաճառք ձևով, 23550 դրամ կադաստրային արժեքով օտարել Սուրիկ Ավդալյանին :

2.Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ :

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ